« Աստուած ողորմի Խանարևկի հոգոյն Մուրատին, Մինասարին, Մելքիսէթին, հէր Ուսէփին . . . . »

Մի այլ ձեռագիր ութածալ, 830 էջէ բաղկացեալ նոտր գրով և յիշատակարանն ետևն էր գրուած երեք թերթերու վերայ. որ կտրուած է, երկու մատնաչափ վայր մնացած է իւրաքանչիւր թերթի վերայ։

Այս ձեռագիրն մի և կէս դարու գրուած հազիւ լինի. որ գրուած է հարց և պատասխանով, որոյ $^1/_3$ը գրուած է « ընդդէմ կորուսեալ ազգին տաճկաց, որք կարապետեն նեռին . . . . » Տաճկաց աւանդութիւններն և մոլութիւններն մի առ մի կը թուէ Ս. գրոց փաստերով և երբեմն Ղուրանէ օրինակ բերելով։

Ապա 16 էջ ընդդէմ հրէից ազգին. ապա « վասն հրեշտակաց ». Սատանայի անկման, հարցմունք պիտանիք, զանազան տարերաց վերայ. Նոյեան տապանի վերայ, սերմնակաթին, կանանց բաժանման, Գեդէոնի գեղման, Սողոմոնի տաճարին. Ս. կոյսն Մարիամ. Անապական մարմնոյն Քրիստոսի. ժողովքի, ժամք աղօթից, շարակնոցի, գրոց ընթերցման վերայ ևլն.

Պատրաստ ունէի քրդ. իգական սեռի անուանց մի ցանկ, որ զրեաթէ համանման էր հայ իգական սեռի անուանց. բացի աստի կարգ մի անձանց գործունէութիւնը և հիւրասիրութիւնը, որք վերջին տարիներս երևան եկած էին, որպիսիք էին Բարսեղ Մուշեղեան, Մխիթար Թաթոյեան, Մելիք Դանտիլեան ևլն. որք մեռած են. Զաքարեան Բարսեղ, Աբրոյ Տ. Յովհաննիսեան, Տ. Մխիթար (կաթողիկ), Բէրբէրեան և այլք, որք ի բաց թողուեցան տեղւոյ սղութեան և ինչ ինչ հանգամանքներու առթիւ. որպէս և ակամայ կրճատած եմ ձեռագիր յիշատակարաններու մի մասն։

ՎԷՐԶ Ա. ՄԱՍԻՆ